շատի վրայով՝ այդ երկու մեծ քաղաքները միացնող մայրուղիով, որով ապահովված կլիներ նաև իր զորքերի թիկունքի անվտանգությունը։

Արտաշատում լատիներեն արձանագրությունների գյուտով մենք ասես կրկին և կրկին ծառանում է մի կարևոր հարց, որը վաղուց լուծում է պահանջում՝ զա հին Հայաստանի հռչակավոր Արտաշատ մայրաքաղաքում հնագիտական պեղումներ ձեռնարկելու հարցն է, որը դարձել է անհետաձգելի անհրաժեշտություն։ Հայտնաբերված նոր նյութերը և տեղում մեր կատարած դիտողությունները տարակուսանք չեն թողնում, որ այդ պեղումները կլինեն արդյունավետ և կոգնեն լուծելու Հին Հայաստանի նյութական մշակույթի և պատմության տակավին չլուծված կամ թերի լուսաբանված շատ կարևոր հարցեր։

Պրոֆ. Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ЛАТИНСКИЕ НАДПИСИ ИЗ ДРЕВНЕЙ СТОЛИЦЫ АРМЕНИИ АРТАШАТ

(Резюме)

В статье сообщается о находке латинских надписей при проведении водопроводной линии в сел. М. Веди на северо-восточной окраине знаменитой древнеармянской столицы Арташат (Ἀρταξάτα греческих источников).

Одна из надписей была высечена на пяти плитах из местного известняка. Высота плит 0,80 м, толщина 0,15—0,21 м, общая длина—8,5 м (сохранившаяся часть—7,30 м).

Надпись гласит: «Император Цезарь божественный сын Нерви, Нерва Траян, лучший Август, Германский, Дакийский, Парфянский, верховный жрец великий, трибунской (властью) облаченный XX раз, императором (провозглашенный) XIII раз, консулом VI раз [отечества отец?], IIII скифский легион сделал (воздвиг)».

Другая надпись высечена на надгробном камне также из местного известняка (размерами 0,72×1,67). Она состояла из 10 строк; хорошо сохранились следующие четыре строки: «Богам Маннам, Кай Валерий, воин вексиллации I легиона италиков, служил» ..монумент (?) поставлен».

На месте находок обнаружены также две базы из известняка, небольшая часть вымостки из рваных камней, зернотерки, фрагменты керамики античного времени и пр.

Армения была захвачена Траяном и провозглашена римской провинцией в 144 г., но римляне смогли держаться в боровшейся за свою независимость Армении до 117 г. К этому времени и относится большая надпись, но ее хронологические рамки более точно определяются провозглашением Траяна императором в XIII раз, имевшим место в середине лета 116 г. и облачением его трибунской властью в XXI раз, имевшим место 10-го декабря того же 116 года.

Проф. Б. АРАКЕЛЯН

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՄԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԶՆԿԱՅԻ ՄՈՏ

«Scientific American» պարբերականում (1967 թ. մարտ, էջ 38—46) տպագրված է թուրք հնագետ Թահսին Էզգյուշի «Հնագույն Արարատը» հետաքրքրական հոդվածը, որի հետ անհրաժեշտ ենք համարում ծանոթացնել հայ ընթերցողին։

Արարատից ուղիղ գծով մոտ 400 կմ դեպի արևմուտք, Երզնկայի մոտ է գտնվում Ալթինթեփե (Ոսկեբլուր, մոտ 60 մ բարձրությամբ, 180 մ երկարությամբ. նկ. 1) կոչվող բլրի վրայի ուրարտական հուշարձանը, որը առաջին անգամ ուշադրություն է գրավել 1938 թ.։ 1956 թ. այստեղ պատահաբար բացվել է մի հարուստ դամբարան։

Թուրքիայի համապատասխան գիտական հիմնարկները 1959 թ. ձեռնարկում են պարբերական պեղումներ, Ալթինթեփեի պեղման ղեկավար ունենալով հնագետ Թ. Էզգյուշին[1]։

Այս ութ տարիների պեղումները բացել են հարտարապետական մի հետաքրքիր կոմպլեքս՝

[1] Գիտական հաշվետվությունները տպագրված են Türk Tarih Kurumu Belleten պարբերականում։

ամրոց, դամբարաններ, պալատ, տաճար, «ժողովարան», պահեստներ և այլն։

Հողվածի հեղինակը այս հուշարձանը համարում է կարևոր մի պահակակետ, որը հսկում էր արևելյան Փոքր Ասիայից արևմտյան Փոքր Ասիա տանող լեռնանցքը, այլ կերպ ասած՝ Արևելյան Հայաստանից Արևմտյան Հայաստան տանող ճանապարհը։

Հուշարձանը, ինչպես հաղորդում է հողվածագիրը, ունեցել է խաղաղ վախճան. ոչ հրդեհվել է, ոչ էլ որևէ գրոհի ենթարկվել, ուստի և իր ներքին հարստությամբ մնացել է գրեթե անձեռնմխելի։

Մեր կողմից նկատենք, որ Ուրարտուի անկումից հետո, հավանաբար, կյանքը այնտեղ չի շարունակվել, հակառակ Սովետական Հայաստանում պեղվող Էրեբունի բերդ-քաղաքի, այլապես հազիվ թե ուրարտական մշակույթի հետքերը այդքան լավ պահպանված մնային։ Երկրորդ բարերախտությունն այն է, որ Ալթինթեփեում բացվել են դամբարաններ, որոնք նյութը պահպանող կարևոր հուշարձաններ են. եթե, իհարկե, դարերի ընթացքում ավերիչ ձեռք չի կպել նրանց։

Հայաստանում պեղվող ուրարտական հուշարձանները, ինչպես հայտնի է, դամբարանական իրեր գրեթե չունեն, եթե չհաշվենք Նոր-Արեշում պատահաբար բացված նյութը. ուրարտացիների թաղման ձևերը մեզ հայտնի չէին. այդ տեսակետից առանձնակի արժեք են ներկայացնում Ալթինթեփեի դամբարանները։ Ըստ հողվածագրի, դամբարանը ներկայացնում է բնակարանի պատկերը՝ փոքրացված չափերով. այն բաղկացած է երեք սենյակից, որոնց դռները փակվում են քարե սողնակներով[2]։ Պատերի վրա կան խորշեր, ուր դրվել են հուղարկավորության հետ կապված իրեր. դիակը, մեծ մասամբ մեկ հոգու, դրված է քարե կամ փայտե գեղեցիկ դագաղում, ննջեցյալը հագնված է նրբագեղ ճաշակով։ Երբեմն մի դամբարանում են գտնվում երկու դիակ՝ կնոջ և տղամարդու։ Կնոջ գլուխը զարդարված է ոսկե խոշոր կոճակներով. կան ոսկուց, արծաթից ու թանկագին քարերից մանյակներ և կանացի այլ իրեր։ Տղամարդու հետ թաղել են առանձնապես բրոնզե ու երկաթե զենքեր։ Դամբարանները կահավորված են փայտե ոսկեպատ կահույքով, որոնց ոտքերը բրոնզից են և պատկերում են ցուլի կամ առյուծի թաթեր. կան բրոնզե կաթսաներ՝ դրված եռոտանու վրա, զարդարված ցուլի գլուխներով։ Գտնվել են նաև զանազան այլ իրեր՝ արձանիկներ ոսկրից, կավից, բրոնզից և այլն։

Դամբարանների պարունակությունից երևում է, որ հանգուցյալները հասարակ, շարքային մարդիկ չեն եղել, այլ կազմել են ուրարտական հասարակության վերնախավը, թերևս ն-սև գինվորական բարձր դասը։

Շատ հետաքրքրական է, որ դամբարանները գտնվել են ամրոցի հաստարեստ պարսպից



Նկ. 1։

---

[2] Tahsin Özgüç, Excavations at Altintepe, Belleten, XXV, № 98, 1961, Ankara, էջ 269—270, նկ. 1, 2։

դուրս[3] և խնամքով սքողված են եղել օտար աչքից. դրանք ծածկված են եղել մեծ սալ քարով, ապա՝ խճաքարի շերտով և, վերջապես, հում աղյուսե շարվածքով։ Արտաքուստ չեն տարբերվել շրջապատի հիմնագույնից։

Չենք կարող չնկատել, որ ուրարտական թաղման ձևը կարևոր նորություն է ուրարտագիտության մեջ, որ ներմուծում է Ալթինթեփեի այս հետաքրքիր հուշարձանը։ Ո՛չ Վանի, ո՛չ էլ Սովետական Հայաստանի լայնածավալ պեղումներից համեմատելիք նյութ, այս առումով, չունենք։

Եթե Նոր-Արեշի նյութը նույնպես թաղման հետ է առնչվում, ապա դժվար չէ նկատել, որ իր ձևով ու պարունակությամբ այն տարբեր է վերը նկարագրածից և, թերևս, թաղման մի այլ ձև է պատկերում, գուցե և հասարակության մի այլ, ավելի ցածր խավի մարդկանց համար կիրառվող։

Կարևոր նորություն է նաև դամբարաններից մեկում գտնված մարտակառքի կատարյալ սարքավորումը. այն զարդարված է եղել ցուլերի, ձիերի, արծիվների գլուխներով. եզակի օրինակ է մի բրոնզե սկավառակ (8 սմ տրամագծով) լիակատար վարդով սլացող թևավոր ձիու պատկերով, հեծյալն է երկար պատմուճանով աստված. ըստ հոդվածագրի, այն արժեքավոր ուղեցույց է հունական դիցարանության մեջ Պեգասի հետ կապված դրվագի ծագումը պարզելու համար։ Կան նաև բրոնզե գոտիներ թևավոր ձիերի պատկերով, առանց հեծյալների։

Եթե դամբարանների պարունակությունը խոսում է ուրարտացիների բարձր արվեստի ու հարուստ գանձարանի մասին, ապա պահեստների չափերն ու պարունակությունը ցույց են տալիս Ուրարտուի ռազմական ու տնտեսական հզորությունը։

Հոդվածագիրը հաղորդում է, որ Ալթինթեփեի կարասների (խիստ նման ուրարտական հայտնի կարասներին) վրայի հիերոգլիֆ փորագրությունները դեռ վերծանված չեն, բայց և այնպես ենթադրում է, թե նրանց պարունակությունն ու պարունակածը մոտավորապես նույնը պետք է եղած լինի, ինչ նկատված է, իր բառերով ասած, «Հյուսիսային Ուրարտուի» պահեստներում։ Նրկատի ունի, անշուշտ, Կարմիր-բլուրի նյութերը՝ Թեյշեբաինի ամրոցի հոյակապ պահեստները[4]։

Եթե դամբարանները եզակի նյութ են, ապա ճարտարապետական կոթողները իրենց շինարվեստի բարձր վարպետությամբ ու գեղագիտական մտահղացումներով վաղուց ճանաչում են գտել շնորհիվ Սովետական Հայաստանում պեղվող Կարմիր-բլուրի և հնագույն Երևանի՝ Էրեբունի բերդ-քաղաքի ճարտարապետական հոյակապ կոմպլեքսների։ Սրանք, ցավոք սրտի, հոդվածում չեն նշված։

Թեև դժվար է հոդվածի սուղ տվյալներով լրիվ պատկերացում կազմել, այսուհանդերձ, մեզ թվում է, որ Թ. Էգգյուշի նկարագրած պալատտաճարը իր ընդհանուր մտահղացումով ու նշանակությամբ մոտ է կամ նույնն է սուսի տաճարը պարունակող արինբերդյան պալատական շենքի հետ, հատկապես իր երկու հիմնական մասերով՝ ա) վարչական ու բնակելի շենքեր, մեծ դահլիճ. բ) տաճարի բաց բակը՝ շրջապատված ծածկով, որը պահվում է փայտե սյունաշարի վրա. գտնված են սրանց քարե հիմքերը և ներքին բագինը[5]։

Արինբերդյան մեծ տաճարն է հիշեցնում Ալթինթեփեի սյունազարդ «ժողովարանը». Թ. Էգգյուշը այն համարում է նախատիպը պարսկական ապադանայի՝ մեծ դահլիճի, որը կազմել է արքայական պալատի բաղկացուցիչ մասը։

Ալթինթեփեի պալատ-տաճարում, տաճարի բեկորների հետ խառը գտնվել են կավե ու բրոնզե սկիհներ, երկաթե մականներ, նետածայրեր. նիզակածայրեր և այլն։

Հեղինակը ենթադրում է, որ այդտեղ եղել են նաև Խալդի աստծու արձանն ու գահավորակը, որոնք չեն գտնվել և երևի ամրոցի տերերը այդ վայրը լքելիս դրանք տարել են իրենց հետ[6]։

Ինչպես հայտնի է, բազմաթիվ նետածայրեր ու բրոնզե այլ իրեր գտնվել են նաև Արինբերդի սուսի տաճարում։ Սակայն Ալթինթեփեն իր ծոցում պահել է արվեստի բարձր, երբեմն եզակի նմուշներ, թերևս մասամբ իր երկարատև կյանքի հետևանքով։

Ալթինթեփեի տաճարի բակի մուտքին մոտ սյունասրահում գտնվել են բրոնզե վահաններ, որոնք, ըստ հոդվածագրի, կախված են եղել, երևի, դարպասից։ Գտնվել են փոքր չափերի փրղոսկրե արձանիկներ՝ նստած առյուծի (նկ. 2), մարդու մարմնով, բայց թևավոր ու արծվագլուխ

---

3 Պարսպից դուրս բացվեցին և Շենգավիթի IV շերտի դամբարանները (պեղող արշավախմբի պետ՝ Ս. Հ. Սարդարյան)։

4 Պետք է նշել, որ Թ. Էգգյուշը իր հոդվածում բնավ չի հիշատակում նույնիսկ աշխարհին հայտնի Կարմիր-բլուրը կամ Արինբերդը։

5 К. Оганесян. Арин-Берд. I, Երևան, 1961, էջ 23, նկ. 4։

6 Մեզ ավելի հավանական է թվում, որ «ներքին բագինի» (սուսի՞) մուտքի երկու կողմում բացված պատվանդանները իրենց վրա կրած լինեն միանման բովանդակությամբ երկու սեպագիր կոթողներ։

մի հիվաղի. սրանք, անկասկած, ուրարտական բարձրարվեստ քանդակագործության գլուխգործոցներ են. նմանօրինակ եզակի, ուրարտական արվեստում մեզ առաջին անգամ հանդիպող մի ստեղծագործություն է, ինչպես ճիշտ նկատում է և հոդվածի հեղինակը, ծառի առջև կանգնած եղջերուի կերպարը. եղջերուն գլուխը ետ թեքած, կենդանի հայացքով նայում է ծառին. փղոսկրե բանդակը իր վրա անցքեր ունի, սրանք լրացված են եղել ոսկու կամ թանկագին քարերի ներդիրներով (նկ. 2, 3)։



Նկ. 2։

Պալատական շենքի հատակներից մեկը ծածկված է եղել խճանկարով, որի նախշերը խիստ անորոշ են, հազիվ նշմարելի. մանր խճաքարով էր ծածկված նաև Արիներերդի սուսի տաճարի առջև փռված բակը, սակայն ոչ հարթ և առանց դույների ու նախշի։

Ուրարտական ճարտարապետություններ, ինչպես վաղուց հայտնի է Կարմիր-բլուրի և առանձնապես Արիներերդի աննախընթաց նյութերից, լայնորեն կիրառել է որմնանկարչություն։ Ալթինթեփեի նոր նյութերը լրացնում ու հարստացնում են մեր գիտելիքները ուրարտական որմնանկարչական արվեստի մասին։ Հայտնի է, որ Սովետական Հայաստանում Կարմիր-բլուրի և առանձնապես Էրեբունիի (Արիներերդի) պեղումների մեջ հատուկ տեղ են գրավում որմնանկարչական արվեստի հարուստ բեկորները[7], որոնց համեմատական ուսումնասիրությունից մենք հանգել ենք հետևյալ եզրակացությանը։

Ուրարտական որմնանկարների առանձին նախշագոտիներ, արտահայտելով մեկ ընդհանուր իմաստ, ներքին իմաստային սերտ կապի մեջ

Նկ. 3։

են միմյանց հետ և, ուրեմն, հիշտ չէ այն կարծիքը, թե իբր շատ դեպքերում դրանք կորցրել են իրենց իմաստը և կրում են սոսկ դեկորատիվ նշանակություն։

Ուրարտական արվեստին, մասնավորապես որմնանկարչությանը խորթ է երկու տարբեր իմաստի հիմնական թեմաներ պետեղել միևնույն զարդագոտիում՝ ցույը և առյուծը չէին կարող մեկ միասնական իմաստ արտահայտող գոտու մեջ պատկերվել։ Մեր այս ենթադրությունը հիմնավորող մի խումբ նյութերի այսօր գումարվում են Ալթինթեփեի պեղումներից հայտնաբերված գեղեցիկ որմնանկարները, որոնք կրկնում են արիներերդյան բեկորը, այն կարևոր տարբերությամբ, որ առյուծները պատկերված են վերը ստանձին լայն գոտեշարով ու անհամեմատ հարուստ համադրությամբ (նկ. 4), մի բան, որ չի պահպանվել արիներերդյան բեկորում։ Այս որմնանկարը, ինչպես հավաստում է հոդվածի հեղինակը, զարդարել է պատի ողջ բարձրու-

7 Սրանք նույնպես չեն նշված հոդվածում։



Նկ. 4։

թյուններ։ Պետք է ենթադրել, որ Արինբերդում էլ որմնանկարները զարդարել են ողջ պատը։

Վերջացնելով այս հաղորդումը Ալթինթեփեի պեղումների կարևոր արդյունքների մասին, զարմանքով պետք է նշենք, որ հոդվածագիրը գրեթե նկատի չի ունեցել սովետական հնագիտության, մասնավորապես ուրարտագիտության կարևոր եզրակացությունները. արդյո՞ք ճիշտ է, որ «ժողովարանը» կառուցվել է VII դարի երկրորդ կեսին ս. թ. ա. և այն կազմում է պարսկական ապադանայի նախատիպը, թե՞ կատարվել է վերակառուցում պարսկական տիրապետության ժամանակաշրջանում, ինչպես այդ տեսնում ենք Արինբերդում։ Վերջին դեպքում հուշարձանի լավ պահպանված լինելը այլ պատճառներ պիտի ունենա։ Որո՞ք հուշարձաններ, ինչպես հավաստում է հոդվածի հեղինակը, լքվել է ուրարտացիների ժամանակ և այլևս ոչ ոք մուտք չի գործել այնտեղ։ Եթե սա ճիշտ է, ապա ճիշտ է և ապադանայի ծագման մասին հեղինակի եզրակացությունը։

Անհրաժեշտ է նկատել նաև, որ հեղինակը իր հոդվածում որևէ, մանավանդ քարի վրա փորագրված (որպես հուշարձաններ որոշակի թվագրող նյութ) սեպագիր արձանագրություն չի հիշատակել։ Տարօրինակ է և ուրարտացիների սովորությանը անհարիր, եթե մտածենք, որ նմանները չեն պահպանվել և, մանավանդ, չեն եղել պատմական Հայաստանի Երզնկա քաղաքի մոտ բացված այդ հուշարձանում։

Մ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ